

ԲԵՒԵՈՒԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

(Շար. տես. յէջ 297)

ԳՂՈՒՒՑ

ԳԱՆԱԸ - ՓԵՓԷ

(Eriaini)

ԱՐՄԱՒԻՑ (Արգիշտիհի), բացի մեր վերը գննած ճանապարհներից, բացում է ազատ ճանապարհ դեպ ի արևելք հիւսիս-արևելք: Դեպ ի արևելք հովիտը շարունակում է մինչև Երևան, ուր տեղից շեշտակի բարձրանում է դեպ ի հիւսիս և արևելք: Այս տարածութեան վրայ գտնուում են ստորին Հոսանքների երկու գետերի, ուրոնք հոսում են երկու տարբեր կողմերից, հիւսիս-արևմտքից ֆասաղ գետի, հիւսիս-արևելքից Հրազդանի (Չանգի): Առաջինը, ինչպէս արդէն ասացինք, բղխում է Արազածի հիւսիսային լանջերից, երկրորդը Մեանայ լճի հիւսիս-արևմտեան անկիւնից: Մտնելով Երասխի հովիտը երկու գետերն էլ միմեանց մտնում են, և թևերի ու ջրբանոցների միջնորդութեամբ հաղորդակցում են իրար հետ: Ներկայումս ֆասաղի ափին է ս. Էջմիածինը, իսկ Հրազդանի՝ Երևանը, երկու նշանաւոր կենդորոններ Երեւանի նահանգի, որոնք յայտնի են իւրեանց բնական յոսութեամբ: Հասանական է կարծել, որ ինչպէս այժմ, այնպէս և Ուրարտեան ժամանակ, այստեղ կին նշանաւոր բնակութեան վայրերը: Այստեղ, ֆասաղի և Հրազդանի ափերին որոնելու է այն աշխարհը, որի անունը յիշում է բեռագիր արձանագրութեանների մէջ Երևանի անուան նմանութեամբ — *Eriaini*. Այդ ձևով նա պատահում է նուազ աստիճանի Գուրան-գոսնը արձանագրութեան մէջ այն ճիշտագրութեան թըւում, որ յիշեալ թագաւորը նուանել է, և

որ Մեանայ շրջակայքում եղած են: *Eriaini* և Երևան անունների նմանութիւնը այնքան մեծ է, որ ակամայ հարկադրուած ենք նոցա համեմատելու, քանի որ Երևան* անունը բառազնական տեսակէտից անբացատրելի է Հայոց լեզուով: Ըստ արմատին մտն են *Eriaini*-ին Երասխի հովիտում երկու այլ երկիրների անունները՝ *Eriahini* — Գալընճայի արձանագրութեան մէջ և *Eriduahini* — Դաշպուտանի Գժուար չէ գուշակել, որ տիրելով ֆասաղ և Հրազդան գետերի ստորին Հոսանքին՝ *Eriaini* երկիրը կարող էր իւր իշխանութիւնը տարածել և այն բոլոր երկիրների վրայ, որոնք գտնուում էին այս երկու գետերի հովիտներում. և շատ հաւանական է, որ *Eriaini*-ի կենդորը այնտեղ էր, ուր արդի Երևանն է, ըստ ս. բում այս բաղաբը ունի ազգագրական յաջող դիրք, լինելով Երասխի հովտի հիւսիս-արևելեան անկիւնի ծայրում: Լեռները արևելքից և հիւսիսից միանգամայն փակում են տափարակը և Հրազդան գետը զուրս է գալիս լեռներից դեպ ի հովիտը: Այս տեղին տիրելով, կարելի էր անարգել ճանապարհ ունենալ դեպ ի հիւսիս և հիւսիս-արևելք Հրազդանի հովտով: Այժմ էլ գլխաւոր ճանապարհը դա է Երևանի տափարակից փոքր կողմասից դեպ ի Մեծն կողմաս հիւսիս-արևմտեան ափերն Գեօկ-չայի և այլն:

Գլխազգաբար մենք շունհիք այնպիսի արձանագրութիւններ, որ վերաբերուէին յատուկ *Eriaini* երկրին. սակայն հիմք ունինք կարծելու, որ Ուրարտեան ժամանակի Երևանը, կամ աւելի ճիշդ ասելով, *Eriaini*-ի տիրաւոր բաղաբն գտնուում էր ոչ թէ Երևանի այժմեան տեղում, այլ փոքր ինչ մեկուսի: Երևանից մի վերստ հեռաւորութեան վրայ կայ մի բաւականին մեծ բլուր, որ տեղից բացում է Երասխի հովտի տե-

* Ինքն ըստ Ինքեան հասկանալի է, որ Երևան յատուկ անունը ոչինչ յարնչութիւն չունի « Երևան » գոյականի և ածականի հետ: Դրան. թարգմ.

տարանը: 1894 թ. պ. Ա. Իվանովսկի այցելեց այդ բլուրը և նորա վրայ գտաւ մի ընդարձակ բերդի հետքեր, շատ նման այն բերդերին, որոնք առհասարակ լինում են բեւեռագիր արձանագրութիւնների մաս: Բլուրը հայերէն կոչւում է Արեան—բերդ, իսկ թաթարերէն Գանլը—թափա (թեփէ): Գորանից 15 տարի առաջ, Չեմիէկիճի զիւլի բընակիչներից մէկն բլրի ստորոտում գտել է մի քար բեւեռագիր արձանագրութեամբ, որ զլրուել է, երեկ, բլրի վրայից: Պ. Ա. Իվանովսկի զիտնականներից առաջինն էր, որ վերահասու եղաւ այդ բանին և քարը գնեց Մոսկովայի Կայսերական Հնագիտական Ընկերութեան համար:

ԱՀա N.º XXI արձանագրութիւնը, որ ընդ ամենը բարդացած է շորս տողերից և պատկանում է Արդիշտիին:

1. Արդիշտի
2. որդի Մենուայի
3. այս բերդը շինեց
4. այն 10,000 քարերից:

Գ Լ Ո Ւ Խ Է

Ե Ա Ա Ռ

(Uluani)

Գ Ե 0 4 — Չ Ա 8 1 8 զկպ ի Երեւան տանող ճանապարհի վրայ, ի միջի այլոց, կայ մի գիւղ Էլառ՝ այն իսկ տեղում, ուր Հրազդանի ձախ թևը երկու ճիւղի է բաժանւում: Գիւղից ոչ հեռու գտնւում է մի բեւեռագիր արձանագրութիւն, փորագրուած մի ահապին քարի վրայ և բաղկացած է տասն սուղից: Որովհետեւ քարը իւր մեծութեան շնորհիւ չէր կարող ուրիշ տեղից փոխադրուել և կանգնած է այն տեղ, ուր էր արձանագրութիւնը փորագրողի ժամանակին, ուստի արձանագրութեան միջի շախարհագրական ցուցումներն մեծ նշանակութիւն ունին մեզ համար: Արձանագրութեան մէջ խօսում է Ուլուանի երկրի և Գարանի քաղաքի նուան:

ման մասին Արդիշտիի ձեռքով: Եթէ Գալուտունի արձանագրութեան մէջ մենք հանդիպում ենք Էրիտուաւհիւի երկրին Լուհիու նինի քաղաքի հետ, Գուրիճանում, Գարանիու գետի վրայ — Կուլխարի երկրին Գուրուանի քաղաքի հետ, Գայլընայում Արփա—չայի վրայ — Իշկիզուլու երկրին Իրզանիունի քաղաքի հետ, եթէ միւս արձանագրութիւնների մէջ՝ Օրդակլու, Ազամխան, Չազալու զիւլբում, մենք հանդիպում ենք երկու անուններին միասին՝ երկրի ու քաղաքի, ուրեմն աներկբայելի է, որ իւրաքանչիւրն այդ արձանագրութիւններից ունի յիշատակարանի նշանակութիւն այն երկրի վերաբերութեամբ, ուր գտնուած է արձանագրութիւնը: Վանի թագաւորները և մանաւանդ Արդիշտի, ըստ երևոյթին, կանոն էին սահմանել, ամենայն յի նոր նուանուած երկրում արձանագրութիւն թողնել, ուր յիշատակում էր այդ երկրի տիրապետելու մասին: Նորա մեծ խնամքով ծածկում էին այս արձանագրութիւնները օտարների քայքայ և նուրբում կրն կամ յետագայ սերնդից և կամ շատուածներին, որոնց ձօնում էին նուանուած երկրները ու քաղաքները: Ինձ անելի ճիշդ է երևում վերջին ենթադրութիւնը: Նոցա (թագաւորների) կարծիքով արձանագրութիւնը միանգամ ընդ միշտ ուրբազործում էր տիրապետեալ երկրներին նուրբում խալի շատուածութեան, և կնքում էր անկապտելի տիրապետութիւնը: Բայց ինչպէս այլուր, մենք արձանագրութիւններ ենք գտնում այն վայրերի մօտ, որ տիրապետեալ երկրի կենդանուն պիտի լինին, այնպէս և այստեղ Էլառում, արձանագրութեան մաս պէտք է որոնել Գարանի քաղաքի զիրքը: Արդարեւ գննելով բլուրը, մենք գտանք նորա վրայ հին ամրոցների հետքեր, որ յիշեցնում էին մեզ Արմաւրի, Գալուտունի, Գանլըճայի ամրութիւններն: Երեկ այժմեան Էլառ գիւղի տեղում էր Ուլուանի երկրի Գարանի քաղաքը: Շատ կարող է լինել, որ Էլառ անունը, որ անհնարին է մեկնել տեղական լեզուներից, գուցէ ժամանակի ընթացքում կերպարանափոխուած է Ուլուանի ձեռքից Իսկ անուան փոխադրութիւնը եր-

կրից քաղաքի վրայ կամ նոյն երկրի կենդանի վրայ, մենք հանդիպում ենք և ուրիշ տեղերում: Օրինակի համար Տուշպա քաղաքը Ուրարտեան թագաւորների օրերից՝ այժմ կոչւում է Վան՝ Բիայնա երկրի անուամբ: Էլյառի արձանագրութիւնը ուսումնասիրելու միջոցին, պէտք է ի նկատի առնուլ այն հանգամանքը, որ արձանագրութեան սկզբի երկրորդ սողում յիշուում է *Etiani* երկիրը, որի գրաւելն Արդիշաի վերադրում է իւր շաստուածներին: Դժուար է թէ *Etiani*-ն դրացի ու սահմանակից լինէր Ուլուանի երկրին ու Գարանի քաղաքին, հաւանական է, որ նոցա անջրպետում էր *Eriahi* երկիրը, դրան ստորագրեալ փոքր գաւառներով (օր. Ալանի): դարձեալ սխալ է պրօֆ. Սէյսի ենթադրութիւնը, իբր թէ *Etiani*՝ Վանի արձանագրութիւնների մէջ, Վրաստանի հասարակ անունն է, կամ առ հասարակ հիւսիսային նահանգի:

- Ահա Էլյառի [N.^o V] արձանագրութիւնը.
1. Խալդիւն եւ աղօթում էի, տիրող հզօրին
 2. որ տուա երկիրն Էտիունի, Խալդի
 3. տուողին, Խալդի, հզօր տուողին
 4. Խալդիացւոց ողորմածաց եւ աղօթում էի
 5. Արդիշաիի, Մենուայի որդու համար,
 6. որ նուանց Ուլուանի երկիրն
 7. քաղաքի Գարանի երկիրն, Խալդիացւոց համար
 8. մեծ, Արդիշաի որդի Մենուայի
 9. արքային հզօրի, արքային մեծի, արքային երկրի Բիայնա,
 10. որ բնակւում է քաղաքումս Տուշպա:

ԳԼՈՒԽ Ը

ՊՈՐՏԱԿ - ՕՐԳԱՅԻՆՈՒ

(Kiehluni)

ՍԵՒԱՆԱՅ լիճը իւր հիւսիս-արևմտեան եղերններում կազմում է երկու ծոց. հիւսիսային ծոցի մօտ այժմ Ռուսաց Ելենովկա գիւղն է գտնուում. իսկ հարաւային ծոցի մօտ՝ Հայոց Օրդախլուն: Ելենովկայից դէպ ի Նոր-Պայէզիտ տանող ճանապարհի վրայ, Օրդախլու գիւղի մօտ կայ Արդիշաի թագաւորի յիշատակարանը: Դեռ գիւղին շատած, 20 քայլ հետո ըրի եզերքից, կարելի է նըկատել մի շարք ոչ բարձր ժայռեր, որոնց ետևից հողը տակաւ առ տակաւ սկսում է բարձրանալ. երկու կանգուն բարձրութեան վրայ մի մեծ քարի զխին ընկած է մի այլ աւելի փոքր քար, որի վրայ գտնուում է Արդիշաիի 9 տող արձանագրութիւնը: Դորա մէջ խօսում է *Kiehluni* երկրի և Խշաիկունի քաղաքի նուանման մասին: Այս ա. նունները մենք կարող ենք ընդունել իբրև բուն կոչումն այս վայրերի Ուրարտեան ժամանակը: Դժուար է ճշգիւ որոշել այդ երկրի սահմանները, բայց ուշադրութեան առնելու է այն իրողութիւնը, որ Գեօկ-չայի այս գաւառը Հայոց տիրապետութեան օրերում կրում էր Գեղաբունի անունը, որ ծածկուած է Կիեհունի կոչման տակ: Շատ հաւանական է կարծել, որ ոչ միայն ընթացիկ այն գաւառը, որ ներկայումս մի կողմից սահմանափակւում է Ելենովկայով, միւսից Օրդախլու գիւղով, այս երկրի մասն էին կազմում, այլ և ընթաց հիւսիսային կողմերը, ուր Չիրուկու գիւղն է, որպէս և Սեան կրգզին, պատկանում էին սոյն երկրին: Թէ՛ որշափ էր տարածւում այս երկիրը ցած Հրազդանի հոտանջով՝ դժուար է ասել, բայց ամենայն հաւանութեամբ կարելի է ենթադրել, որ *Kiehluni*-ն միջանկեալ երկիր էր

Ուլուանիի հետ, որի կենդանոնը արդի էլ առունի էր:

Գալով Իշտիկունի բաղաբն, բնական է որոնել զորան Օրդակուի արձանագրութեան մտակայքում: Եւ արդարեւ հարց ու փորձ անելով ես տեղեկացայ, որ զիւրի մտակի բլուրներից մէկի վրայ, որ լճի ափն են կազմում, կան հին շինութիւնների հետքեր: Ես վեր ելայ այս բաւականին մեծ բլրի վրայ և տեսայ այնտեղ արդէն Գաշպուտունից ինչ ծածկած տեսարանը: Գետնի երեսին ընկած կոփածոյ բարերը վկայում էին՝ թէ աւազի շերտերի տակը ծածկուած են հին շինութիւնների մնացորդները: Բայց այս բլրի տարածութիւնը աւելի ընդարձակ է, քան թէ Գաշպուտունի: N^o 1 արձանագրութեան մտ եղածինը. միննոյն լայնութիւն ունենայով դա, համարեա թէ, կէս վերտտ երկայնութիւն ունի: Մինչև անգամ տեսարանը, որ ներկայանում է զիտողի աչքին, յիշեցնում է Գաշպուտունի բլուրն, այն տարբերութեամբ միայն, որ այս վերջինից կարելի է տեսնել Երևանի լայնածաւալ և միակերպ զաշտաւայլը շրջապատած լեռներով. այն ինչ Օրդակուի բարձրաւանդակից բացուած է գեղեցիկ տեսարան Սևանայ լճի հարթ ու հաւասար մակերևոյթի վրայ, նայնպէս պարփակուած լեռներով: Գաշպուտունի բլրի վրայ ես ու Պ. Խվանովսկին նկատեցինք պեղուտների հետքեր, մինչդեռ Օրդակուի մտայլախի բան չէ նկատուած:

Արհիտի մի օր ճանապարհ գնալով, կարող էր Գեօկ-չայի ափերից անցնել Սեմե. նովկայի վերելքը, ինչն էր Գիւրջանի ձորը, ուստի ազատ ճանապարհ է դէպ ի Մեծն Կովկաս, Կուր գետի հովիտը. բայց այդ ճանապարհի վրայ այն ժամանակներից չէ գտնուած ոչ մի բեռնագիր արձանագրութիւն, ոչ մի յիշատակարան, և այդ պատճառու մենք չգիտենք՝ փորձ փորձել է արդեօք Արգիշտին յիշեալ ճանապարհին տիրելու՝ իւր աշխարհակալութիւնները տարածելու համար այս ուղղութեամբ: Բայց թէ այդ ճանապարհը նորա համար բաց էր և նա ի նրկատի ունէր այն իւր յառաջ խաղալու մեջընդէն դէպ ի հիւսիս, կասկած չկայ բնաւ:

Նոյնպէս յայտնի չէ մեզ, շարունակեց նա արդեօք իւր արշաւանքը Գեօկ-չայի եզերքներով. հաւանական է կարծել, որ նա շատացաւ միայն լճի հիւսիս-արևմտեան ափերով՝ նուանելով Հրազդանի ամբողջ հովիտը, վասն զի ուրիշ տեղերում Գեօկ-չայի մտ մենք չենք գտնում այս թագաւորից մնացած յիշատակարաններ:

- Օրդակուի N^o VII արձանագրութիւնը.
1. Խաղիպուց մեծաց
 2. Արգիշտի ասում է՝
 3. ես նուանեցի բաղաբն Կիեհունի երկիրն,
 4. բաժանեցի բաղաբն Իշտիկունի
 5. երկիրն, որ կոչուած է «լնային»
 - 6.
 7. Արգիշտի համար
 8. արքայի հզօրի, արքայի երկրին Բիւխնա
 9. որ բնակուած է Բաղաբուն Տուշպա:

Գ. Ս. Ս. Բ.

Ա Պ Ա Մ Ե Ա Ն

(Tulihuni)

ԻՄ անձնական ծանօթութիւնս Գեօկ-չային՝ սահմանափակում է նորա հիւսիս-արևմտեան եզերքով, ուր գտնուած է Օրդակուի արձանագրութիւնը, սակայն իմ ընկերակից, բոտ ճանապարհորդութեան, Պ. Ա. Խվանովսկու կատարած աշխարհագրական և հնախօսական հետազոտութիւններն լճի շուրջը, և նորա՝ էստամպածի միջնորդութեամբ՝ հանած բնեղադիր արձանագրութիւնները Գոյանը-գրոսնը և Ջաղալու գիւղերում, մեզ հնաբաւորութիւն են տալիս փոքր ինչ որոշ կերպով խօսելու այս տեղերի անցելոյն մասին Ուրարտեան թագաւորների օրերում (Ը գար նախ քան զԲրեստոս): Իւր մի յօդուածում, որի խորագիրն է «Озеро Гокча» (Սեւանայ լիճ), Պ. Խվանովսկի մանրամասնօրէն նկարագրում է լճի եզերեայ վայրերի ֆիզիքական պայ-

մաննեը, որոնք կարող են նշանաւոր նիւթ մատակարարել խորհրդածելու համար լճի ափի բնակութիւններէ մասին Ուրարտացոց ժամանակ, որ և հաստատոււմ են այստեղ գտնուած արձանագրութիւններով : Այժմ ճշդութեամբ կարելի է ասել, որ լճի արեւելեան եզերքը, որ բաղկացած են բարբառակահնի բարձր լեռնագոտիներից, երբեք բնակութեան տեղեր չեն եղած, և թէ արևմտեան եզերքն է՝ ի հնումն խիտ բնակութիւն չեն ունեցել : Պատկերն, որ նկարոււմ է Պ. Ի. վանովսկիի, աւանդելով հրաբխային յեղափոխութիւնից յառաջացած կործանումն Օրդակուից մինչև Նոր-Պայէզիտ, մեզ տրամարում է կարծելու, որ ոչ միայն այժմ, այլ և հին ժամանակը այս բնութեամբ քանդուած գտաւոր շատ սակաւ բնակիչ է ունեցած : Ուստի շատ բնական է ենթադրել, թէ վանի թագաւոր Արդշտի հասնելով Օրդակու, դադարեցրեց այստեղ իւր յաղթական արշաւանքը, հիւսիսից իւր առաջը ունելով բաճախի գծուար անցանելի լեռնագոտին, իսկ հարաւից իւշ-թեփեղեր լեռները լճի ափերին : Այս խոչընդոտներին յաղթելու ծանր խնդիրը նա թողիք իւր յաջողութիւն, որոնք սակայն, մասամբ միայն լուծեցին այն՝ լճի հարաւային ափերի վերաբերութեամբ. իսկ գալով արշաւանքին դէպ ի հիւսիս Մեծ կովկասը, ինչպէս երևում է, Արդշտիի յաջողութիւնը չեն վստահացել կատարելու : Արդշտիի յաջողը, Սարգուրի ԲՐԻԷ և սորա յաջորդ, Ռուսա առաջինը մեծ յաջողութեամբ յաղթելով յիշեալ խոչընդոտներին, կատարեցին մի շարք աշխարհակալութիւններ Գեօկ-չայի արևմտեան և հարաւային կողմերում, որոնց յիշատակը յաւերժացրին իրենաց պերճախօս արձանագրութիւններով : Այդ յիշատակարանները գտնոււմ են լճի հարաւ-արևմտեան և հարաւային ափերում : Այստեղ լեռնագոտիները, չորս կողմից պարփակելով լճին, փոքր ինչ հեռանում են եզերքից և վայրերը ընդունում են աւելի ցած և բնակութեան համար յարմար բնակութիւն : Խիստ, բայց քաշառող կլիմայն, ձկան առատութիւնը լրճում, մշակութեան ընդունակ երկիրը, լեռ

նագոտիներով պաշտպանուած թշնամաց յարձակումներից և բարձր դիրքով հասած մինչև ձիւնային գծերին, վերջապէս լճի փառահեղ գեղեցկութիւնը, իւր յեղեղով, կապուտակ և սիրուն կոհակներով և բարձր, իրր թմբբած ափերով — այս ամենը հրաւիրում է բնակիչներին ասիթ հովիտներից այս՝ ոչ այնքան ճոխ՝ բայց զովարար և առողջ տեղերը : Արձանագրութիւնների թուին ու նոցա նշանակութեանը նայելով, կարելի է ենթադրել, որ Գեօկ-չայի հարաւ-արևմտեան և հարաւային եզերքը աւելի շին էին և բնակիչներով հարուստ, քան թէ այժմ են, և այնտեղ գոյացած անկախ գաւառները քաղաքական տեսակետից ոչ աննշան դեր էին կատարում Ուրարտեան ժամանակը : Հաւանական է, որ վանի թագաւորները՝ Սարգուրի ԲՐԻԷ և Ռուսա առաջինը միջառնակեան Գեօկ-չայի այս եզերեայ գաւառները ոչ այն ճանապարհաւ, որով Արդշտի հասաւ հիւսիս-արևմուտքը լճի, այսինքն է Հըրազզանի ձորով, այդ ճանապարհը շատ երկար է և գտնար իւշ-թեփեղերի վրայից : Նոքա կարող էին ընտրել աւելի ուղիղ ճանապարհ Նրևանի ասփարակից դէպ է Մանրզարի հովիտը, ուր գտնոււմ է Սարգուրի ԲՐԻԷ յիշատակարանը : Պ. Իվանովսկու վերկայութեամբ, այն իսկ ձորը Նրևանի մօտ, որի մուտքում գտնոււմ է մեր տեսած Գանլը-թափա բլուրը, ուր գտնուեցաւ բնեագիր արձանագրութիւն, անընդհատ ձգոււմ է դէպ ի արևելք, հասնոււմ է իւշ-թեփեղերի կատարը և ապա վերելքի միջնորդութեամբ հարդրակցում է մի ուրիշ ձորի հետ, որ տանում է մինչև Մանրզարի հովիտը : Արդշտի թագաւորը, որ շինել է Գանլը-թափայի բերդ և արձանագրութիւն է թողել այնտեղ, ակնեւ է, որ ունէր Գեօկ-չայի դոների բանակին և թեթեւացրել է իւր յաջողութիւններին համար Գեօկ-չայի նուստումն, թէպէտ և ինքն հնարաւորութիւն ունեցած չէ տարածել իւր տիրապետութիւնը մինչև լճի եզերքը : Սարգուրի ԲՐԻԷ, նորա յաջորդ՝ առաջինն էր, որ հասել էր Մանրզարի հովիտը, ուր և թողեց արձանագրութիւն, որ գտնուեցաւ Արամիան գետի մօտ

և այժմ փոխադրուած և ի կովկասեան թան-
գարան թիֆլիզում :

Ա. Իվանովսկիի գալով Արամիան, տեղե-
կութիւններ է տողովել արձանագրութեան
բարի տեղի մասին: Երբունքի ցոյց են տուել
նորան մի կոյտ բարեր, ուր եղել է մի ժա-
մանակ արձանագրութեան քարն, որ աւելի
մեծ բարի կտոր է: Տեղի պայմանները նոյն
են, ինչ որ տեսանք Գաշպուտունում: Ա-
րամիանի արձանագրութեան ուսումնասիրու-
թիւնը բուն իւր տեղում, ինչ միջոց աուաւ
հարտատեղու պրօֆ. Լիմանի ընթերցանու-
թիւնը ոյն Սարգուրիի հօր անուան, որին
պատկանում է արձանագրութիւնը, այսինքն
Ar-gis-te-li-ni-se և դրանով հերքել Սէյ-
սի կարծիքը, թէ այլ արձանագրութեան
մէջ յիշուած աշխարհակալը իբր թէ չէր
պատկանում Վանեան հարստութեան, այլ
տեղական թագաւորներիցն էր: Այդ թիւրի-
մացութիւնը ծագեցաւ արձանագրութեան
փորագրելու անսովոր եղանակից, որ խու-
սափում է թագաւորների յատուկ անունները
ընդունված ձևով գրելուց, տարբեր են գա-
ղափարները ու ձայնական նշանները: Յա-
մենայն զէպս կասկած չկայ, որ այստեղ
մենք հանդիպում ենք մեզ յայտնի Սար-
գուրի Բուրն, որդուն Արդիշտիի, որ մի
բանի արձանագրութիւններ է թողել Արմաւ-
րում: Արդիշտին, ինչպէս տեսանք նախընթաց
գլուխներում, իւր արշաւանքները ուղղում
էր զէպ ի հիւսիս, և մենք չգիտենք ինչն
հարկազրեց նորան կանգնել մի կողմից Ա-
լեքսանդրապոլի դռների առաջ, միւսից բաւ-
բակի լեռների մօտ. զուցէ, նորա յառաջ
խաղալն աւելորդ էր, ըստ որում ֆոքը կով-
կասը նորա պետութեան բնական սահմանն
էր, կամ կարելի է նա բաւական էր համա-
րում տիրել Մեծ կովկասի զխաւոր անց-
քերին, յաշորգններին թողնելով իւրեանց զէնքն
աւելի հեռու տանել: Բայց նորա յաշորդ-
ները ակներև է, որ սպայուած էին հան-
գամանքների բերմամբ շարժել, ոչ թէ զէպ ի
հիւսիս, որ նորա ապահով էին կարծում
Արդիշտիի տիրապետութեան շնորհիւ, այլ
զէպ ի արևելք: Դորա պատճառը, զուցէ,
պէտք է որոնել այն ժամանակի քաղաքական

յեղափոխութեան մէջ Առաջաւոր Ասիայում:
Տիրաւոր-Պիլիսեր Գուրն արշաւանքները զէպ
ի Ռարաու, այս աշխարհի մայրաքաղաք
Տուշպայի աւերումն, միով բանիս Ռարաուի
պարտութիւնը Արդիշտիի փառաւոր յաղթու-
թիւններից յետոյ, ընդ միշտ սահման դրին
Ռարաուեան թագաւորների յաղթական ար-
շաւանքներին զէպ ի հիւսիս: Սակայն այս
ձախորդութիւնները ոչ միայն չհարկազրեցին
Սարգուրիին և նորա յաշորդին հրամարտիչ
աշխարհակալութիւններից իւրեանց այս հիւ-
սիսային նահանգում, այլ ընդհակառակն այդ
աշխարհակալութիւնները ուղիորական ետան-
գով շարունակում էին Երասխի հովտում:
անհնարին էր տիրել վերջնոյս, առանց նուա-
ճելու այս լեռնային գաւառները, որոնք ի
քնէ ամուր և բարգաւաճեալ գրութեան մէջ
էին:

Արամիանի արձանագրութեան բովանդա-
կութիւնը տային և հետաքրքիր աշխարհա-
գրական և պատմական տեղեկութիւններ:
Նա աւանդում է, թէ Սարգուրի Բուրն նը-
ւածել է Տուրհունի քաղաքը, որ այստեղ
կոչւում է մայրաքաղաք տեղական թագա-
ւորի Սինալիբի, որդու Լուրիի և Վանի
միապետը գերի բռնելով յիշեալ Սինալիբի
թագաւորին իւր բոլոր անով, արանց ու կա-
նանց հետ զուրս է տարել երկրից: Քաղաքի
մայրաքաղաք կոչին (քաղաքաբազիր կա-
ղացում է « արքայական քաղաք, արքայա-
նիստ »), պատահում է միանգամ Գաշպու-
տունի արձանագրութեան մէջ, ուր Լուհիւնինի
քաղաքը նոյնպէս կոչւում է մայրաքաղաք:
Քուցէ պատահական բան պէտք է համարել,
որ միւս քաղաքները, նուաճուած Երասխի
հովտում, չեն կոչւում մայրաքաղաք, թէ և
դոքա այդ նշանակութիւնը ունէին. ինչ և
իցէ, այստեղ մենք հանդիպում ենք մի փոքր
պետութեան, որ նոյնքան անկախ էր, որ
քան Էրիսուտահի Գաշպուտունի մօտ: Այս
արձանագրութեան մէջ մենք գտնում ենք
նաև բուն երկրի անունը, որին պատկանում
էր յիշեալ մայրաքաղաքը, այն է՝ Էլուրիե-
տինի: Երկիրն նուաճելով զրկեցաւ իւր ան-
կախութիւնից և ազգային հարստութիւնից:
Դա կրկին առաջին զէպն է, որ Անդրկով-

կատի սահմաններում գրաւուած երկիրնե-
րում վանի թագաւորները զինուորական
բանութիւններ են գործ գնում: Ուղտորհետինի
երկրի տարածութիւնը մեծ չէր. դա ձգուած
էր Մանրղարի հովտով դէպ ի հարաւ, հա-
զրէ մինչև Ալիեմաման գետը, ըստ որում
գորանից յետոյ մենք տեսնում ենք ուրիշ
իշխանութիւններ Գեօկ—չայի հարաւային ե-
զերքում: Այդ փաստերը առիթ են տալիս
մեզ ենթադրելու, թէ Ուրարտեան ժամանակը
հարաւ—արևմտեան եզերքը Գեօկ—չայի ու-
նէին խիտ ազդաբնակութիւն և կազմում էին
անկախ, ուրոյն գաւառներ:

Աղամխանի արձանադրութիւնը [N. XVI]

1. Ազատ Խարդիազուց
2. Սարդուրի, որդի Արդշախի,
3. ասում է՝ քաղաքը Տուրհհունի, քա-
ղաք արքայական,
4. Սինալիբի, որդու Լուբրի,
5. իբր աւար նուանեցի. Սինալիբի
6. թագաւորի, արանց կանանց ես հա-
նեցի,
7. բաժանեցի երկրից Ուղտորհետինի:
Շարայարելի

Ի. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆՑ



Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Գ Ի Ի Գ Ո Ր Բ Ա Ա Ս Տ Ե Ա Ն Ց Ի

Ա Ն Տ Ա Ո

Այնքան վերջերում տերևներ դեղմած՝
Կատաղի քամուց շըրուկ են հասում.
Երկրի երեսը մառախուղ պատած՝
Երկըմքից անվերջ ամօրև է թափվում:

Մահում զեղովութեամբ ծածկուած են դաշտեր,
Մարդկային սրբտից շնն ցըրում վշտեր,
Ուր որ մայում ես — պատկե՛ր այլամդակ,
Կամզած առախրո՛ք՝ ձըմնո՛ղ զըքմըղակ...

Ամեն տեղ տիրած լճու ամայութիւն,
« Ամապատ » կարծես ամբողջ ընթուփիւմ...
Նչ չըկայ եռամդ, զորոն ու աշխատանք,
Լճու է աշխարհը, մեռած է և կենք...

Բայց հետո՛ւ, մըռայլ, մհոթ երկըմքի տակ
Երբուկ ամտառը մըրափեց՛ց՛ երկար.
Ուր խոր երազում — քաղց՛ր սխառու —
Տեսնում է ոյտեր նոր գարնան համար...

Ա Ռ Ա Գ Ա Ս Տ

Լ Ե Ր Մ Ո Ւ Ն Ց Ո Վ Ի Ե Ց

Առաջնուրի մէջ՝ ազատ ովկիանի
Մի առաջատու է միայնակ փայլում.
Ի՞նչ է թողել մա երկրում մայրեմի,
Ի՞նչ է որոնում հետո՛ւ աշխարհում...

Գոռում են ալիք... քամու դղրդիւմ
Փոքրում է կայմը, ուժգին ճարճատում.
Աւաղ, չէ փըմբում մա երէտեղութիւն,
Ոչ էլ երէտեղ կենացից է խորքում...

Նրբա մերզուր — շուրթ համատարած,
Վերև — արևի սուկի ճառագայթ
Բայց մա խմբում է մըրբեկ կատարած՝
Կարծես Սըրա մէջ կայ՝ « Հանգիստ » ամիայթ...

Ն Ա Ի Ա Պ

(Ի Բ Ա Ռ Ո Ց Ն Ա Ռ Ո Ր Ի Ե)

Թ՛ող մըռնայ մեր ծով անդ՝
Բուռն փըրփուրներ շղթայած
Թ՛ող ամպ գոռայ որոտալիք
Երկմից՝ սաստիկ կատարած...

Ո՛րքամ կուզե թ՛ող մեր ծովը
Ալիկծուի սաստկաբար —
Եւ մեզ, իմեպէս թեթև տաշեղ՝
Նետէ ըըլուք, ժայռ ու սար...

Գէ՛հ, շուտ Նաւակ իմ քայտախոր
Պատուիք կուրծքը մեծ ծովի —
Առագալաց թըռիչքներով
Դէպ ի հետո՛ւն դու վազի:

Յըռիք ամվան դէպ՝ առաջ,
Խորտակելով ողջ արգելք՝
Եւ կորովի, ամհում ոյժով
Անցի՛ր դէպի Արևելք...

Անդ բացվում է վշտա սըշուրոյ
Լայն առաքաբէջ Նոր կենեքի.
Գէ՛հ, քայ Նաւակ իմ լեռայոս՝
Տուր Նաւորդու սերտ, Կուզի...

1. Այլիքի՛ խոր ցնեց;
2. Ռուսաց յայտեի բանաստեղծ: Պոլշիկից դարձէ
Երկրորդն է յիշվում: